

քը լոկ տեսական իմաստութեան պարապելնուն համար ոչ միայն ստացած ածներէ՝ այլ և օրինաւոր կերպակուր ներէ հրաժարելով պարզ քիչ և անպաճոյք ըմսելվածներով բաւականացնան, և իրենց կեանքը առաքինի մահապահ վերջացուցին . մենք ո՞շափ աւելի պարտաւոր ենք Քրիստոսի սիրելիներուն նմանիլ, որնք հրեշտակաց կրօնին ընդունեցին և երկնաւոր զօրաց գասը խառնուեցան: Կէք ով միայնակեացներ, եկէք եկէք մենք ալ մեր ստացածոց թշնամի ըլլալով, ոննչացունենք զանոնք իրեւել ստար երկիր . եկէք, այս թշնամին ծառատունիները իրեւեգերի նեղեալներուն ծախենք, չեթէ ազգականներնին ատելով, այլ աղքամաները աւելի սիրելով. որոնք Քրիստոսի զօրականներ և ծամրիս բարեխօսներ են: Ապա եթէ դու այս սեղ քու ստացուածոյդ հետ կր կապուխուդուն զքեզ անդարձ գերութեան կը մատնես . ուր ամենեւին ազատութեն գին չկայ. ապա և ոչ ազատութիւն . փոյթ ըրէ եղբայր, փոյթ ըրէ, շուտ ըրէ որ այն անողորմ գեհենէն ապրիս և կարենսա ամուր քաղաքը հասնիլ, ուր գերի ըլլալու կասկած կամ երկիւղ մը ամենեւին չը կայ:

Երբ, թէ որ հարց գեղեցիկ վարդապետութեան հետեւիս, որոնց՝ (այսինքն այն սուրբ միայնակեացներուն) վրայօք քիչ մը յառաջ խօսեցայ, այն առեն կարսու եր դու առանց ախտաւոր չարչարանքներու մասց աչքերը վերցնել և զքեզ բուլը երկինքէն բարձր տեսնել. Այն առենը յիրաւի երանի պիտի տաս անձիդ այս աշխարհին վլտակց կեանքէն՝ բարութիւն ապատելուդ համար. այն առենը միայնակեացներուն երամին, որ արդարաց գնդին, առաքելոց վիճակին, մարտիրոսաց խումբին, հրեշտակաց բանակին և

անդրանկաց ժողովնն ընկերակից պիտի ըլլաս երինից մեծ քաղաքին մէջ աքրահամեաններու հետ բազմելու, երկնաւոր կերպակուրներ ուտելու և անկարութ ըմակելներ խմելու համար: Այսուհետեւ այն մարդարէն գու ես, որ թէպէտ այս մարմնաւոր աշխարհին մէջ չպատուեցար սակայն թե երդ բացած անմարմին աշխարհը թւար, և անսպական ուրախութեանց մէջ հանգըլասնալով, հոն բնակութիւն հաստատեցիլ:

Օ՞ր՝ մենք մեր վերջին գրչովը աշխատանկերս ալ կը փախագինը մեր սուրբ ուխտին միաբանութեան հետ միասին վայելել մեր Յիսուս Քրիստոս Տիրոջ շնորհիւը, որուն միշտ և հանասղազ փառք կուտանք:

Յակի՞ Յավիկիմ Անուշեան  
Պոլուշի:

## Ժ.Ա.Մ.Ե.Ն.ԵԿ.Վ.Բ.ՐՈՒ.Թ.Ւ.Դ.Ն.Ք.

Անցեալ թուով իմացուցած էլմրք քաղաքիս արքունի զօրաց հրամանաւոր | Խլա փաշայի իւր ծերութեան պատճուաւ պաշտօնէն հրաժարելն ու Դամակոսի մէջ իւր կենաց մնացարդը հանգստութեան մէջ անցընելու համար ասկէ մեկնիլը: Յիշեալ փաշային յաջորդեց անմիջապէս նոյն քաղաքի զնուուրական հրամանաւուր վ սեմ. | անըք Անւատափա փաշայն, որ ներկայ ամսոյս սկիզբները հասաւ քաղաքս և սովորական յարգանքը ընդունուեցաւ: Քանի մի աւուր յետոյ Ամենապատիւ Արքազան Փատրիք արքը նորին Վ սեմայթեան տեսութեան երթալով, ամսոյս 19ին բարեհաձեցաւ ինք եւս փոխադարձ այցելութիւն ընել:

— Քանի մի շաբաթէ ի վեր քաղաքը կը գոնուի նախեւ Արքուութա-

Ֆիրանէւսքօն Աւտորիս, որ էր նախորդ գուցք ԱՌոտենայի ։ Ի նկերակից են իւրեան՝ եղբօրը ծավակահասակ որդին Աւֆոնս տը Պորպօն ։ Դուիձի Անձելինի, որ է բժիշկ Աւտորիս բանակին մէջ և նյն պաշտօնիու, ընկերացած է նորին արքայական բարձրութեան, և Ճիւռլը Պուտսօնի քահանայն Ամսոյ 12 ին բարեհաճեցաւ այցելութեան գալ Ամենապատիւ Արքազան Պատրիարքին ։ որոյ ընկերակցութքը մեծի Անուց գլխաւոր տեղերը պըտուելով և յատկապէս ի թանդարանը գալով, երկրորդ անգամ պատուեց զայն իւր ստորագրութիւնը գնելով Այցելուաց ցամիկին մէջ ։ Առաջին գալուստն էր ի Կա մարտի, 1864 ։

Ամսոյ 8ին հասաւ ի սուրբ քաղաքը Այցելսանդրիս հուտմէադաւան Յունաց ամենապատիւ Պատրիարք Դիղորիսս եպիփուապուար ։ Այսպիսի դէպքերու մէջ սովորութիւն է ամէն քրիստոնեայ ազգաց կողմէն գիմաւորելու համար քանի մի անձնութ իրկել ։ Նմանապէս սուրբ Աթոռոյս կողմէն վարդապէտ մի հանդերձ ետախճի ով փութաց ի պատիւ Դիղորիսս պատրիարքին ընդառաջել ։ Քանի մի օրէն զինի Ամենապատիւ Տ. Ասայի Արքազան Պատրիարքը չորաւ նորին տեսութեան, և փոխադարձ այցելութեամբ եւս զիրար արժանաւոր մեծարանօք պատուեցին ։ Ամսոյ 20 ին մեկնեցաւ Այցելսուրիս ։ Յիշեալ պատրիարքի իրաւասութեան տակն են Դամասկոսի, Անտիոքյ, Իբրահամու և Հյուսաղէմի հուլմէադաւառաւան Յոյն ժողովուրդը ։

Այցին օրը այսինքն ամսոյ 20 ին մեկնեցաւ նաեւ ԱՌոտենայի նախորդ գուցք՝ բարձրապատիւ Ֆիրանէւսկից արջիդուքան Աւտորիս ։

— Այուրբ Աթոռոյս միարանական տարին ներկայ ամսոյու մէջ լրանապուն՝ յետագայ պաշտօնափոխութիւններն տեղի ունեցան ։ Արժանապահան թաւ գէոս վարդապէտ նախորդ հիւրընկալ լու սուրբ Օննդեան վանուց տեսուչ կարգեցաւ փոխանակէ Արք ։ Կիրակոս վարդապէտին, որու յանձնուեցաւ սուրբ յարութեան Տաճարի տեսութիւնը Պիրութի Արք ։ ակտուչ Գէսորդ վարդապէտը Դամասկոսի եկեղեցւոց տեսուչ անուանեցաւ, և իւր տեղը յաջորդեց Արղարացի Արք ։ Վարդապէտը ակտ իւր առանաբար վարդապէտը տեսութիւնը ։ Խառնաբար վարդապէտի նոր Աթոռոս կրապասուի Յուպիկէի և Աէմիլէի տեսզութեց փոփոխութիւն չեղաւ, որոնց առաջնը Արք ։ Աթանաս վարդապէտին և Երկրորդը Արք ։ Խորէն վարդապէտին յանձնուած են ։ Կարեկացի Արք ։ Յուումա վարդապէտին յանձնուեցաւ սուրբ Փրկչի վանաց և սուրբ Աստուածանի գերեզմնի Տաճարին Տեսութիւնը փոխանակէ Արք ։ Եղէն վարդապէտին՝ որոյ յանձնուեցաւ մնմէ խանէի տեսզութիւնը ։ Իսկ հիւրընկալութեան պաշտօնը յանձնուեցաւ Վանեցի Արք ։ Անդովկը վարդապէտին ։

— Այուրբ քաղաքէս մինչեւ ի Յուպիկէ եղած Տանապարհին շինութեան վերաց քանի մի անգամ յիշասակութիւն ըրած եմք ամսաթերթիւն մէջ, որոյ կարեւորութիւնը քանի մի տարիէ ի վեր խիստ գգալի եղած եր Լուրուպացի երեւելլի անձանց յաճախելնուն պատճառաւ ։ և արդէն տարի մի է որ սկսուած է շինութիւնը, և անց ցեալ ամի բարեպաշտ ուխտաւորաց բաւական դիւրութիւն տուաւ ։ Անդովկը որ յայսնի է, շինութեան ձեռնարկուած օրէն ի վեր խօսք կ'ըլ-

լար նաև ճանապարհորդաց . աւելի գիւրութեանը համար կառքերու եր . թեւեկութիւն հաստատել , օրինակ առնելով Վիրութէն մինչեւ ի Դամասկոս գնալիք ճամբուն նորութիւն նը . Այսն խորհրդակցութիւնները այս օրերո իրական կերպարանք մի ըստացան . աեղլոց վսեմափոյլ Փաշային համութեամբն ընկերութիւն մի յատուկ հաստատուեցաւ , և քանի մի անդամ ժողովը ընելով իրենց ձեռնարկելի գործոցն ուրուագիծն յօրինելով և հանդերձ խնդրագիրով տեղւոյս կառումարութեան միջոցաւ Դամասկոսի միւշիւր վսեմափոյլ ԱԵՀէ մետ Բաքէտ Փաշային ուղարկեցաւ , խնդրելով որ Աարձրագոյն Դանէն հըրամանագիր բերել տալու շնորհը ընէ : Ծնկերութիւնը որոշած է , որ եթէ ի . Դուռը իւր պայմանները ընդունելով տասը տարուան համար արտօնագիր շնորհելու ըլլոյ , անմիջապէս գործի սկսի Քւր կրյուամբ որ բարեինամ Ծէրութիւնը , որ իւր երկրին ամէն մասամբ ծաղկելուն և բարդաւաճելուն մեծ հոգ և ջանք միշտ ցոյց տուած է , պիտի բարեհաճի այսպիսի օգտակար ընկերութեան մի ինդիրը և պայմանները միրով ընդունելով՝ գործադրութեան մասին խրախոյ ևս տալու . Ծնկերութիւնը 400 բաժին որոշած է , ամէն մէկ բաժին ասսնական օսմաններն լիրայ , որ կ'ընէ 4000 լիրայ . սոյն գումարով պիտի հոգացուին հարկաւոր ծախչերն ու տեղ տեղ կայարաններ պիտի շնորհին . Տասը բաժին գրուողը իրաւունք պիտի տուանայ ամսականով որ և իցէ պաշտօն մը վարելու ընկերութեան մէջ . և գըրսէն ոչ ոք պիտի ընդունուի գործավարութեան համար +

- Առեւք . Օմիւռնոց սուրբ Ասեփանստ եկեղեցւոյն արժանապատիւ-

Տէր Կարապետ քահանայն Ծէօքմէն ձեան սուրբ Աթոռոց թանգարանին նուիրեց երկու ձեռապիլու մատեան . առաջինն է Խօսէմիջի հանգուցեալ Տէր Պօղոս քահանային բանաստեղծական երկարիութիւններն հայերէն և տաճկերէն լրջուաւ , որու մէջ կը պարունակին զանազան տաղէր , զբասաւ և խրատական երգեր . և այլն . Երկրորդն է Յովհաննու աւետար Անշի Յայտնութեան գրոց մեկնութիւնը համարու և պարզ ոճավ Յովհաննէս անուն բանասիրի մի աշխատասիրութեամբ՝ գրեալի Օմիւռնիայ յամի 1825 . Այսն երկու դրվերը Արժանապատիւ քահանայն իւր հանգուցեալ բարեպաշտուհի եւ ծաղկահասակ երէցկնոջ համար յիշատակած է :

### ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍԻՐԵԼԻ ԲԱՐՁՐ ՄՐԲԱՉԱՆ ԵՂԲԱՅՐ

Ըստ տնօրինութեան Վէհագուռ կաթողիկոս ամենայն հայոց Տ . Տ . ԳէՈՐԴԱՑ , Սինօգու Մայր Աթոռոց սրբոց Եղմանի պարտ համարի աղքանել Զերում Արքեպութեան : զի յօրաշնչեկայ անսանն անուանմարեցի ներկայ ամի ՚ի 29 Կորոնում պառը ՚ի տանի Վարագայ սուրբ Խաչի ունի լինել օրեն նութիւն սրբալոց Միւռունի ըստ ծիփ Հայուսաւանոց սրբոց Եկեղեցւոյ :

Ուստի Ատեման Սինօգիս խնդրէ ՚ի ԶԵՆ , չնորի աւնել հրատարակել զայ ՚ի գիտութիւն համայն Հայուններց վիճակիդ հոգեւորականոց և աշխարհականոց . որպէս զի անսկացողք ՚ի նոցունց հութիւնաստ գտանիլ շորհաբաշխութեան օրհնութեան և ուղցն Արքութեան , շորհաբեր լիրին ՚ի Նըշանակիւլ ժամանակին ՚ի տարբ Աթոռու : ըստ պանձակի օրինակի բարեհշատակ և նըրմեռանդն նախնաց մերոց :

18 Ապրիլի 1808 ամի ի սուրբ Էջմիածնի համար հայութիւն Անողի :

Դմայս 28 ին , սրբոց Դայիսնեանց կուտանսաց ատնախմբութեան օրը կատարուեցաւ վայելուչ հանդէս տեղւոյս Հայ օրիգրդաց վարժարանի մէջ , որ Դայիսնեանց անունը կը կրէ : Հան-

Դիմին ներկոց էին Վայնապատիւ Արքա  
բազմն Պատրիարքը Եպիսկոպոսով և  
վարդապետներով հանդերձ, և աշա-  
կերտու հեաց ծնող ըը և ապդականքը:  
Վայնապետներէն (որոց թիւը յի-  
սունի կը հանի), չորս օրիորդներ ձա-  
ռեր կարդացին և իւրաքանչիւր ձա-  
ռի կարդացումէն առաջ երգուեցան  
դաշնաղոն աղդային պատաշարժ երգեր.  
որք կը յիշցընէին մայր Հայաստանի  
քաղցր միշտասկները և նախնեաց  
հայրենասէր սիրագործութիւնները:  
Խայ ձառերու պարունակութիւնն էր  
գլխաւորապէս օրիորդաց գաստիարա-  
կութեան, ծնողական պարտուց և  
Գայիքանեանց միշտասկնի վերայ: Ու-  
րախալի էր լնել օրիորդաց գրչէն և  
բերնէն այն պարտաւորութիւնները,  
որ իրենց սեռին կը պատկանի: Եթէ  
ներկայ հայութիւնը կանանց կրթու-  
թեան նկատմամբ տակաւին իրական  
յառաջադիմութիւն չունի, գոնէ այս  
եւս մեծ միջթարութիւն է, որ տեղ  
տեղ Հայ օրիորդները սկսած են խոր-  
հիլ և խօսել այն ամենահարիսաւոր  
նիւթերուն վերայ: որ իրենց մայրե-  
րուն բոլորովին անծանօթ էին: Յա-  
ռաջադիմութեան քայլ մի կը համա-  
րենք մենք այս շարժումը, երբ որ կը  
տեսնենք որ իստական նոր սերունդը  
ակսած է իրեն սեռի պարուերը յեղ-  
յեղէլ: Հարկաւ նոքա մայքեր գար-  
ձած ժամանակը նոյնը գործով պիտի  
կատարեն և իրենց հոգացողութեան  
առաջին փոյթը իրենց որդուոց գաս-  
տիարակութեան համար գործադրեն.  
որով և անուարակայս կարենք լինիլ, որ  
գաստիարակութեան խնամածու մայ-  
քեր ունենալին զինի: պիտի ունե-  
նանք հայութեան կրթուած նոր սե-  
րունդ և հետեւապէս աղդային յա-  
ռաջադիմութիւն մարդկութեան յա-  
ռաջադիմաց ասպարիզին մէջ:

Վ շակերտու հեաց ճառերու աւարդ-  
տումն յեաց Վմե՝ Պատրիարք Հայր-  
ը խրատական յորդոր խօսեցաւ ծը-  
նօղաց, որ իրենք եւս հսկեն օրիոր-  
դաց լնասանեկան կենաց վերայ, որ  
միս զի ի գուր չանցնին (]: Վթուաց  
խնամքները, օրհնեց Վգել, Վթուոր,  
դպրոցները, գաստիարակները. և  
յատկապէս յայսնեց իւր շնորհակա-  
լութիւնը Վրժ, Տեսուչ Վկրոիչ վար-  
դապէտին, Զմիւռնացի Վառվառէ  
պարփէշտատւն Վարժուհի օրիորդին,  
և ուսուցչաց ու աշակերտու հեաց։  
Նորին Վրբազնութեանը ձայնակցե-  
ցան և հանդիասականք շնորհակալու-  
թիւն մատուցանելով աշխատաւորնե-  
րուն: Վրբազն Պատրիարքը իւր յոր-  
դորական խօսքը աւարտելէն և ամե-  
նաւն օրհնութիւնն տալէն յետոյ, ներ-  
կայ հանդիսականց հետ սկսաւ, ա-  
շակերտու հեաց ձեռագործները աչքէ-  
անցընել, որ մեծ սեղանի վերայ կար-  
գաւ շարուած էին, գործողներու աւ-  
նունները վրան գրոշմած: Յայս ու-  
նիք, որ եթէ անցեալ տարի 250 ձե-  
ռագործ վիճակահանութեան ելաւ,  
այս տարի կրկնապատիկը պիտի լինի:   
որ մեծ պարծանք է մասնաւորապէս  
Վարժուհի չանասէր օրիորդին:

### Ի՞նձի վայագրոյն օրինակ:

Վենապատիւ Վրբազն Հայր:  
Կէլւազուցի Վարդիս Վրիփորեան  
և Վշոցի Յարութիւն Վանուկեան  
տղայք տեսայ և բատ բժշկական օրի-  
նաց քննելով կը վկայեմ որ ոչ ներքին  
և ոչ արտաքին հիմանդրութիւն մը  
ունին և արատաւորութիւն մը ալ չու-  
նին. ամեն կազմենիչ ալ աղէկ ըլլարզ  
մենք ալ արժանաւոր կը դատիմք ժա-  
ռանդաւորաց գլորցի աշակերտուե:

Նուատ Սահակ Քիթապիթեան.  
1868 Մայիս 6 բժիշկ Ս. Աթուաց-  
իւրուազէմ: